



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 23 ՓԵՏՐՈՒՐ, 2015

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՐՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 119

ԱՍՏՈՒԾՈՅ ՕՐԷՆՔԸ

Երանի՛ անոնց, որոնք ամբասիր կեանք մը կ'ապրին,
որոնք կ'ապրին Տիրոջ Օրէնքին համաձայն:
Երանի՛ անոնց, որոնք Տիրոջ պատուիրանները կը գործադրեն,
ամբողջ սրտով անոր կը հնազանդին.
որոնք չարիք չեն գործեր, այլ՝ անոր ճամբուն մէջ կը քալեն:
Երիտասարդ մը ինչո՞վ կրնայ ինքզինք մաքուր պահել,
եթէ ոչ՝ քու խօսքերդ գործադրելով:
Ամբողջ սրտով կ'ուզեմ քեզի հնազանդիլ.
մի՛ ձգեր որ պատուէրներդ խտտորիմ:
Շնորհք ըրէ ինձի՝ քու ծառայիդ,
որպէսզի ապրիմ եւ խօսքերդ գործադրեմ:
Սորվեցուր ինձի, Տէր, կանոններդ պահելու կերպը,
եւ մշտապէս պիտի կատարեմ զանոնք:
Քու ձեռքերովդ ստեղծեցիր եւ զիս կազմեցիր.
տուր որ հասկնամ եւ սորվիմ քու պատուէրներդ:
Փրկութեանդ կը կարօտիմ, եւ իմ յոյսս խօսքիդ վրայ դրեր եմ:
Ինչքան կը սիրեմ Օրէնքդ, ամէն օր ան է խորհրդածութեանս առարկան:
Խօսքդ ճրագ է քայլերուս, լուսաւորող՝ ճամբաներուս:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՂՈՐՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղէրոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ԱՂՈՐՔ

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ էո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ցանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբե՛ սասանեցայց.
եւ ողորմեա՛ էո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԻԹԸ



ԵԼԻՑ Ի (20) ԳԼՈՒԽ



ՏԱՍԸ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ (20:8-11)

Պապուիրանը կը շարունակուի: Չորրորդ պապուիրան.

«Հանգստութեան օրը միտքդ բեր՝ զանիկա սուրբ պահելու համար»:

«6 օր պիտի աշխարհս ու բոլոր գործերդ ընես, բայց 7-րդ օրը Տիրոջը, քու Աստուծոյդ հանգստութեան օրն է. այն օրը գործ մը չգործես»:

«Որովհետեւ Տէրը վեց օրուան մէջ ըրաւ երկինքն ու երկիրը, եւ եօթներորդ օրը հանգստացաւ. անոր համար Տէրը օրինեց հանգստութեան օրը ու սրբեց զանիկա»:

Այս պապուիրանը առնչուած է հանգստութեան օրուան: Աստուծոյ Իր օրինակով կ'ուզէ մարդուն սորվեցնել բան մը որ կատարուած է հանգստութեան օրուան: Միւս կողմէ, այս պապուիրանը նաեւ սկզբունք մըն է որ կատարուած է մարդկային կեանքի բարիքին: Որովհետեւ աշխարհանքը լաւ բան է, բայց նաեւ հանգստութեան անհրաժեշտ է մարմինին համար: Սակայն պապուիրանին դիտումը մարմինը չէ միայն, այլ նաեւ՝ մարդը ինքն՝ հոգին: Մարդը սրբեցնուած է Աստուծոյ նմանութեամբ եւ պարկերով, հետեւաբար պէտք է դառնայ Աստուծոյ հայելին, եւ այս իսկ պարճառով Աստուծոյ Ինքզինք կ'ընծայէ իբրեւ գերագոյն օրինակ, եւ հանգստութեան օրինակը կու տայ մարդուն բարիքին համար, որովհետեւ Աստուծոյ սրբեցնեց ամէն ինչ եւ չղաղրեցաւ գործէ, այլ նախախնամութեամբ աշխարհանքը շարունակեց, որուն համար Քրիստոս պիտի ըսէ. «Հայրս մինչեւ հիմա կը գործմէ եւ ալ կը գործեմ»:

Իսկ հոգեւոր բաժինը այս պապուիրանին այն է, որ մարդը այդ օրը՝ Շաբաթը ամբողջութեամբ պէտք է ինքզինք աշխարհային մտայնութիւններէ հեռու պահէ, եւ նուիրուի աղօթքի եւ պաշտամունքի, որովհետեւ յաճախ երբ մարդը ծանրաբեռնուի աշխարհանքներով կրնայ զԱստուծոյ մոռնալ: Այս պարճառով Տէրը կ'ուզէ որ մասնաւոր օր մը ճշդուի Իր եւ մարդուն միջեւ կապը չկտրուելու համար: Միւս կողմէ, հանգստութեան (7-րդ օր) պարկերացումն է վերջնական այն հանգստութեան, որ պիտի գայ Տիրոջ երկրորդ գալուստով, որ երկնաւոր հանգստութեան օրինակն է, որ մենք պէտք է պարկերացնենք այս աշխարհի մէջ, որովհետեւ այս աշխարհը պարկերացութեան ժամանակն ու ընթացքն է յաւիտենականին համար: Հետեւաբար, ինչպէս Յայրնութեան գիրքը կ'ըսէ, որ յաւիտենական կեանքին մէջ մարդուն վիճակը զԱստուծոյ փառաբանելն է անդադար, պաշտամունքային վիճակը: Ուրեմն այս պապուիրանով Աստուծոյ կ'ուզէ սորվեցնել Իր ժողովուրդին, Իր իսկ օրինակովը, որ այդ հանգստութեան օրը ուրիշ բան չէ եթէ ոչ զԱստուծոյ փառաբանելու, Աստուծոյ իրենց կեանքին կեդրոնը ունենալու: Խորքին մէջ ոչ թէ օրն է որ պէտք է Աստուծոյ նուիրելը, այլ՝ մեր անձերը:

Ահա թէ ինչու, այդ օրը ոչ թէ միայն միտք բերելու, կամ մտքի մէջ ունենալու, այլ այդ օրը սուրբ պահելու: Որովհետեւ այդ օրը Տէրը սրբեց: Սուրբ պահելը կը նշանակէ միւս օրերէն փարբեր նկատել: Մէկ այլ ուրիշ բանի յարկացնել: Եւ այս պարագային Աստուծոյ:

Տակաւին, հանգստութեան օր: Յաճախ հանգստութեան օրը մենք կ'առնենք իր փառացի բացարձակութեամբը, այսինքն որեւէ մէկ աշխարհանք չընել, ինչպէս կը հասկնային հրեաները իրենք, մինչեւ այսօր: Սակայն, արդեօք որքանով իրապէս հանգստութեան կրնանք ընել, եւ հանգստութեան ունենալ, այնքան արեւն որ մեր մտքերն ու հոգիները ծանրաբեռնուած են: Անոր համար ալ Քրիստոս պիտի ըսէ. «Ինձի եկեք դուք բոլորդ եւ ես ձեզի հանգստութեան պիտի տամ»: Սա կը նշանակէ իսկական հանգստութեան ոչ թէ գործ չընելուն մէջն է, այլ Քրիստոսի երթալը, Քրիստոսի հետ ըլլալը, Քրիստոսով լեցուիլը, Քրիստոսը ըլլալով մեր կեանքի կեդրոնը: Ահա այս իսկ պարճառով Քրիստոս փոխառ իսկական իմաստը այնպէս ինչպէս միւս պապուիրաններուն, նոյնպէս ալ Շաբաթին, երբ ըսաւ. «Մարդն է Շաբաթին փերը, եւ ոչ թէ Շաբաթը մարդուն»: Եւ վերջապէս, այդ հանգստութեան օրը եղաւ Քրիստոսի յարութեան օրը, որպէս Տէրունի օր «ԿԻՐԱԿԻ», երբ Քրիստոս յարութիւն առաւ, փալով մարդուն իսկական յաղթանակն ու հանգստութեան մեղքին ու մահուան վրայ փարուած: Հետեւաբար, եկեք շնորհակալութեամբ վայելենք Տիրոջ փոխառ բարիքներն ու օրերը, ու մասնաւոր՝ 7-րդ օրը, այնպէս մը ապրինք, որպէս նախաճաշակ այն գալիք իսկական հանգստութեան որ ուրիշ բան չէ եթէ ոչ Տիրոջ հանգստութեան՝ յաւիտենական կեանքը: